Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-577-02.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի ամբողջ տեքստում «քսանհինգապատիկի» բառը փոխարինել «յոթանասունհինգապատիկի» բառով, իսկ «երեսնապատիկի» բառը՝ «իննսունապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 150^2 -րդ հոդվածում՝

1) «քառասնապատիկի» բառը փոխարինել «հարյուր քսանապատիկի» բառերով.

2) «քսանապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով.

3) «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնհինգապատիկի» բառով.

4) «հիսնապատիկի» բառը փոխարինել «հարյուր հիսունապատիկի» բառով.

5) «տասնապատիկի» բառը փոխարինել «երեսնապատիկ» բառով.

6) 4-րդ մասում «մեկ տարվա» բառերը փոխարինել «վեց ամսվա» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Առաջին ընթերցում

Կ-577-02.05.2023-ՊԻ-011

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի ամբողջ տեքստում «քսանհինգապատիկի» բառը փոխարինել ~~«յոթանանասունհինգապատիկի»~~ «յոթանասունհինգապատիկի» բառով, իսկ «երեսնապատիկի» բառը՝ «իննսունապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 150^2 -րդ հոդվածում՝

1) «քառասնապատիկի» բառը փոխարինել «հարյուր քսանապատիկի» բառերով.

2) «քսանապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով.

3) «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնհինգապատիկի» բառով.

4) «հիսնապատիկի» բառը փոխարինել «հարյուր հիսունապատիկի» բառով.

5) «տասնապատիկի» բառը փոխարինել «երեսնապատիկ» բառով.

6) 4-րդ մասում «մեկ տարվա» բառերը փոխարինել «վեց ամսվա» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-577-02.05.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք շտկել տեխնիկական բնույթի վրիպակը, մասնավորապես՝ «յոթանանասունհինգապատիկի» բառը փոխարինել «յոթանասունհինգապատիկի» բառով:	**Ընդունվել է**	Ընդունվել է: